



AMERICAN UNIVERSITY OF ARMENIA CORPORATION

Affiliate of The University of California

**Տօքթ. Վարդգէս Գնուճի
Նախարար.
Հայաստանի Հանրապետութեան
Ուրախագոյն կրթութեան եւ գիտութեան
նախարարութիւն.
13 Մովսէս Խորենացի պողոտայ,
Երեւան**

Պալթիմօր, Փետրուար 14, 1995

Սիրելի՛ Պր. Նախարար

Ներկայ ճամակով եւ ներփակ ծրագրով ձեզ կուգանք տեղեկացնելու Հայաստանի Ամերիկեան Համալսարանի Հանրային Առողջապահութեան միամեայ ծրագրին մասին, ձեզ հաղորդելու այն զարգացումներուն մասին որ այս ծրագիրը եմթարկուեցաւ վերջին վեց ամիսներուն, եւ հայցելու ձեր օժանդակութիւնը ծրագրի իրականացման ուղութեամբ:

Յուճիսիճ երբ Երեւան էի, Առողջապահութեան նախարարութեան Համաձայնագրագրողներու վերակազմաւորման ծրագրով, փոխ Նախարար Դերենիկ Թումանեանի մասնակցութեամբ մենք ամհատապէս բժնեցինք Ամերիկեան Համալսարանի մեր այս ծրագրին դիմող թեկնածուները եւ միջազգային չափանիշերու հիման վրայ մենք ընդունեցինք 25 հոգի որպէս այս ծրագրին ուսանող: Վերջին ամիսներուն մեր այս ուսանողները արդէն իսկ մասնակցած են անգլերէնի եւ համակարգիչներու դասընթացներուն: Յաջորդող քանի մը օրերու ընթացքին մենք կը կատարենք վերջնական ընտրութիւնները հիմնուած վերջերս կայացած մուտքի բժնութիւններու արդիւնքներուն վրայ: Մենք շատ լաւատես ենք ընդունուած ուսանողներուն կայունութիւններով:

Անցնող ամռան եւ աշնան մենք ունեցանք երկու ծրագրային միօրեայ սեմինարներ եւ շատ մը ուրիշ ժողովներ ծրագրի մանրամասնութիւնները ճեւաւորելու եւ կազմակերպելու համար: Այս հանդիպումներուն մասնակցեցան Ամերիկայի զանազան շրջաններէն հայ թէ ամերիկացի Հանրային Առողջապահութեան համալսարաններու դասախօսներ ու մասնագէտներ: Այս մասնակցողներէն մէկ կարելոր մասը պիտի կազմէ մեր ծրագրին դասախօսական կազմը:

Նոյնմբրին Պալթիմօր եւ Ուաշինգթըն այցելեց ՀԱՀ-ի Օսիսագահ Տօքթ. Միհրան Աղպապեանը եւ այս առիթով ստորագրուեցաւ համաձայնութիւն ծօնգ Հօփքինգ համալսարանի տնօրէնութեան հետ. մեր այս ծրագրի ակադեմական ծրագրումի եւ որակի հսկողութեան գործը վստահելով ծօնգ Հօփքինգ համալսարանի հանրային առողջապահութեան բաժնին: Ինչպէս գիտէք ծօնգ Հօփքինգի այս ֆագուլդէտը իր Յիւդիզ մէջ աշխարհի մեծագոյնն է: Համագործակցութեան այս համաձայնութեան որպէս արդիւնք եւ Ոչամակուեցայ տնօրէն ՀԱՀ-ի Հանրային Առողջապահութեան

14/95 TUE 14:10 FAX 410 955 0883

JHU EPIDEM

003

Ծրագրի մասին:

Ինչպես կը տեղեկանաք Ռեպուբլիկայի Ծրագրին, մեր ակադեմիական անդամակցները եւ պատրաստել գործունեայ մասնագետներ որոնք կարող են հանրային առողջապահության եւ առողջապահական վարչական ծրագիրներու իրագործման մէջ հիմնական դեր խաղալ: Այսպիսի ծրագրի մը իրագործման համար մենք կը հաւատանք որ անհրաժեշտ է շատ մօտ գործակցութիւն հաստատել Առողջապահության նախարարութեան հետ: Չէր եւ Առողջապահության նախարարութեան գրասկան եւ քառագոյ կեցուածքը այս ծրագրի ձկատմամբ մենք ռզոունեած ենք որպէս գործի յաջողութեան կարելոր գրասկաններէն մէկը:

Միամեայ մեր ծրագիրը կը բաղկանայ երեք եռամեայ շրջաններէ: առաջին եռամեան կը կեդրոնանայ հանրային առողջապահության հարցերու լուծումները գտնելու եւ կազմակերպելու վրայ: Հոս կը տրուի հարցերու բաճակաւորման գամազան միջոցներ եւ գիտութիւններ, ինչպէս նաեւ մարդկային եւ ընկերային մօտեցումներ այս հարցերը լուծելու համար: Երկրորդ եռամեան առիթն է հարցերը քննարկելու աւելի կազմակերպուած մօտեցումներ քարգացնելու: Ռոս է որ ուսանողները աւելի կը հմտանան համաճարակաբանութեան, մրցողորտի գիտութեանց եւ առողջապահական տնտեսագիտութեան եւ ֆինանսագիտութեան մէջ: Երրորդ եռամեան ծրագիրները գործնականացնելու գիտութեան վրայ կը կեդրոնանայ: Հոս կը ներկայացուի դասեր առողջապահական վարչագիտութեան ինչպէս նաեւ ծրագիրներու արժեւորման մասին:

Դասաւանդութիւնները կ'օգտագործեն ներկայի Ամերիկեան համալսարաններու մէջ օգտագործուող լաւագոյն մօտեցումները: այսպէս ծրագիրներու իրենց գործնական մասնակցութիւնը կը բերեն ուսանողները եւ առողջապահական նախարարութեան մասնագետներ: Ուսանողներն ու դասախօսական կազմը իրենց գործնական մասնակցութիւնը կը բերեն նախարարութեան ծրագիրներու իրականացման: Համալսարանը այս ձկատակով կ'ըստեղծէ մասնաշառուկ հարմարութիւններ:

Մարտի վերջին շաբաթուան ընթացքին գործակիցներու հետ կը հասնինք նրեւան մեր դասընթացները սկսելու եւ պաշտօնապէս բացումը կատարելու մեր այս ծրագրին: Այս առիթով պիտի ուզէիք ունենալ ձեր հովանաւորութիւնը բացման հանդիսութիւններու ինչպէս նաեւ առիթը ձեզ հետ հանդիպելու եւ լսելու ձեր գաղափարները այս ծրագրին մասին:

ՀԱՀ-ի այս նորագոյն ծրագիրը զարգացման փուլի մէջ է եւ կրնայ շատ կարելոր ներդրում կատարել առողջապահական սպասարկութիւններու զարգացման ուղղութեամբ: Մեր իսկապարտութիւնը այս ծրագրի յաջողութեան ձկատմամբ ձեր զօրակոր հաւատարմով է որ կ'ամրապնդուի:

Բարեկամական լաւագոյն մաղթանքներով

Տարութիւն Գ. Արմէնեան
Տնօրէն